ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան, Շիրակի 88/1 01 նոյեմբերի 2021թ.

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝
Հանձնաժողովի նախագահ՝
Կարեն Թորոսյան՝ Տնօրենի տեղակալ
Անդամներ՝
Զարուհի Աղամալյան՝ Անձնակազմի կառավարման բաժնի պետ
Լիլիթ Ոսկանյան՝ ֆինանսատնտեսական բաժնի հաշվապահ
Տիգրան Ոսկանյան՝ Գլխավոր ինժեներ
Հրաչյա Համբարձումյան՝ SS մոնիտորինգի պատասխանատու
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումների համակարգման և կազմակերպման մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

1.1 «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2021թ. հոկտեմբերի 14-ին gnumner.am պաշտոնական կայքում և armeps.am համակարգում:

1.2 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. հոկտեմբերի 21-ը ժամը 17:30-ն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Ապրանքի անվանումը	գնային առաջարկը առանց ԱԱՀ / ՀՀ դրամ/	գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ / ՀՀ դրամ/	Նախահաշվային գին ՀՀ դրամ
Չափաբաժին 1						
1	«Յունիքիմ» ՍՊԸ	Ք. Երևան, Արտաշատի խճ. 11 ՀՎՀՀ 02242529 info@unichemllc.com	Ավտոմեքենաների մաքրող միջոցներ	316667	380000	400000
Չափաբաժին 2						
1	«Յունիքիմ» ՍՊԸ	Ք. Երևան, Արտաշատի խճ. 11 ՀՎՀՀ 02242529 info@unichemllc.com	Հակասառիչ հեղուկ	512500	615000	700000
2	«Մոսէսքո» ՍՊԸ	Ք. Երևան, Նար-Դոս 75 ՀՎՀՀ 04214892 lcmosesco@gmail.com		525000	630000	

3. **Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են սահմանված կարգի պահանջներին:

4. **Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/26» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արդյունքում պարզվեց, որ «Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ը ներկայացված է թերի՝ մասնակցին առաջարկվել է հստակեցնել առաջարկվող ապրանքների ապրանքային նշանները և մակնիշները:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, մինչև ս.թ. հոկտեմբերի 25-ը ժամը 18:00-ն և մասնակցին առաջարկվել է շտկել վերոնշյալ Հավելվածում տեղ գտած անհամապատասխանությունը և սահմանված կարգով ներկայացնել շտկված փաստաթուղթը «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/26» ծածկագրով ընթացակարգի քարտուղարին մինչև նիստի կասեցման ավարտը:

Շտկված փաստաթուղթը ժամանակին չներկայացնելու դեպքում կկիրառվեն վերոնշյալ կարգի 42-րդ կետի դրույթները:

Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է շտկված փաստաթուղթը:

«Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից armeps.am համակարգում լրացված և կցված գնային առաջարկի մեջ առկա էր անկամապատասխանություն:

Հանձնաժողովը որոշեց՝ համաձայն «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/26» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.4 կետի՝ հիմք ընդունել համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

5. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Յունիքիմ» ՍՊԸ-ին որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 2-րդ չափաբաժնի մասով «Մոսէքո» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անգործության ժամկետը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի:

Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ծանուցել «Յունիքիմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին և ներկայացնել պայմանագրի նախագիծը, որը կկնքվի ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կ. Թորոսյան

Անդամներ՝ Լ. Ոսկանյան

Զ. Աղամալյան

Տ. Ոսկանյան

Հ. Համբարձումյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան